

26. 843

115 JAN 2010

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԱՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԻՀ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ

1933 թ. ԳՅՈՒՂ ԶԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

169
38
2493
38

Խորհրդային իշխանության ձեռնարկումները գյուղում նպատակ ունեն պաշտպանելու բաղձամիլիոն աշխատող գյուղացիության շահերը և նպաստելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը պրկած, հետամնաց բոլոր մենատնտեսներին կոլտնտեսությունների մեջ միավորելու համար:

Միաժամանակ այդ ձեռնարկումները ուղղված են դեպի կոլտնտեսությունների ամրապնդումն, առանձնական մշակույթների հետագա զարգացումն, բերքատվության բարձրացումն, աշխատանքի արտադրողականության բարձրացումն և այլն:

Նման ձեռնարկումներից մեկն է գյուղհարկը:

Գյուղհարկը քաղաքական և տնտեսական խոշոր նշանակություն ունի: Նա միշտ յեղել է և այժմ էլ հզոր գնդ է պրոլետարական պետության ձեռքում դասակարգային քաղաքականությունը գյուղում անցկացնելու համար:

Վորպեսզի գյուղհարկը համակերպված լինի այդ խնդիրների հետ, օգտագործվի փորպես խթան այդ խնդիրների լուծման համար, 1933 թ. գյուղհարկի արևելի մեջ մի շարք հիմնական փոփոխություններ և մտցված:

1933 թ. դյուղհարկի դիմումը առանձնահատկությունը կայանում է նրանում, ինչպես կոլտնտեսությունների, նույնպես և մենատնտեսների 1933 թ. դարձանագրանի հարկվող յեկամուտը հաշվարկվում է ըստ սահմանված պլանային ցանքի տարածություն, այլ ինչ թե փաստացի ցանքի համեմատ: Այդպիսով պլանից դուրս կատարված ցանքը ազատվում է հարկումից: Դա խոշոր արտոնություն է և պետք է ընդարձակի դաշտամշակությունը:

Գյուղհարկի որենքի յերկրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, ինչպես կոլտնտեսությունների հարկման կարգը անցյալ տարվա համեմատությամբ միանգամայն փոփոխված է, ույն իմաստով, ինչպես հարկումն պետք է ոժանդակի նրա տնտեսական զարգացմանը:

Հարկի դրույքները սահմանված են զանազան մշակույթների համար տարբեր չափերով և չափ ցածր են:

1933 թ. հարկման հետևյալ առանձնահատկությունը, աշխատավարձը հարկումից ազատելն է: Ինչպես կոլտնտեսություններում, նույնպես և կոլտնտեսականների ու մենատնտեսների կողմից վարձու զրազմունքներից ստացած աշխատավարձը միանգամայն ազատվում է հարկից և համապատասխան դեպքերում յենթարկվում է յեկամտահարկի:

Կոլտնտեսություններում ամբողջովին պահպանվում են անցյալ տարվա արտոնությունները բամբակի չաքարի ճակնդեղի, կտավհատի, կանեփի և այլ տեխնիկական մշակույթների նկատմամբ: Կենդանաբուծությունը զարգացնելու նպատակով կոլտնտեսություններին 1932 թվին տրված խոշորագույն արտոնությունները ամբողջովին պահպանվում են և այս տարի, այսինքն անասունների յեկամուտը ազատվում է յիսույն հարկից:

Կոլտնտեսությունների բերքատվության բարձրացման պլանը իրագործելու և հաշվառումն ու հաշվետվությունը կանոնավորելու համար դյուղհարկի նոր որենքը

336
2-25 no
առաջավոր կոլտնտեսություններին խրախուսելու նպատակով, հատուկ զեղչեր է սահմանում:

Ինչպես և անցյալ տարի, դյուղհարկ վճարում են այն կոլտնտեսականները միայն, ինչպես տնտեսության մի մասը թողել են իրենց տրամադրություն տալ: Կոլտնտեսականներից զանազանից հարկը վերջում է կայուն դրույքով:

Կոլտնտեսականների համար պահպանվում են այն բոլոր կարևորագույն արտոնություններ, ինչպես պետք է նպաստեն կենդանաբուծության զարգացմանը, խորհրդային առևտրի հետագա ծավալմանը և այլն: Մակամագոր կոլտնտեսականներն իսպառ պիտի ազատվեն հարկից:

Աշխատավոր մենատնտեսների յեկամուտի հարկումը 1933 թվին, նախընթաց տարիների որինակով կատարվելու յե յեկամտաբերություն միջին նորմաների և դրույքների պրոպորցիոնալ տախտակի համաձայն, բայց մինչև 200 ու յեկամուտ ունեցող մենատնտեսների հարկը հաշվարկվելու է ինչ թե պրոպորցիոնալ, այլ կայուն դրույքներով:

Մենատնտեսների հարկման կարգը և հիմնական արտոնությունները թողնված են անփոփոխ, այսինքն բամբակի, կանեփի, կտավհատի ցանքերը հարկվելու են դաշտամշակության նորմաներով, անասունների ալելիցուկը ազատվելու յե հարկից և այլն:

Վորպեսզի ավելի զարգանա խորհրդային առևտուրը, այս տարվա դյուղհարկի որենքով նույնպես արտոնյալ կերպով են հարկվում մենատնտեսների կողմից չուկայում գոյացող գներով դյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացած յեկամուտները:

Խրախուսելով կոլտնտեսության առևտուրը, նոր որենքը առանձնապես խիստ է սխտեմատիկ սպեկուլյացիայով զբաղվող տնտեսություններին: Այդ տեսակի տնտեսությունները համարվում են կուլակային տնտեսություն և հարկվում են անհատական կարգով:

Գյուղհարկը միաժամանակ կուլակությանը, վոր պէս դասակարգի լուծարման յենթարկելու գործը զենքերից մեկն է: Այդ պատճառով կուլակն իհարկե, վոչ մի արտոնություն գյուղհարկից չի ստանում և գյուղատնտեսությունից և վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած նրա յեկամուտը հաշվի յե առնվում իրիվ չափով: Բացի այդ, հարկը կուլակի յեկամուտից հաշվվում է ավելի բարձր տախտակով: Որենքը միևնույն ժամանակ խտրիվ արդելում է աշխատավոր տնտեսություններին անհատական կարգով հարկելու: Որենքի այդ պահանջը խախտողները պետք է յենթարկվեն պատասխանատվության:

Յաճը բերվում են բոլոր արտոնությունները ըստ վճարողների առանձին կատեգորիաների:

ԻՆՉԳԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1933 թ. դրված կարեւորագույն խնդիրներից մեկը կոլտնտեսությունների բերքատվության բարձրացման հարցն է:

Առաջավոր այն կոլտնտեսությունները, վորոնք գործնականում կատարել և զերակատարել են բերքատվության բարձրացման պլանը և բացի այդ ճիշտ և որինակելի ձևով են տանում հաշվառումն և հաշվետվությունը, զեղջ են ստանում հարկից:

Բերքատվության պլանի բարձրացման և հաշվառումն ու հաշվետվությունը կազմակերպելու համար արվող զեղջերի ընդհանուր չափն որենքով սահմանված է տվյալ կոլտնտեսության գյուղհարկի դումարի մինչև 25 տոկոսի չափով:

Այն հարցը, թե արդյոք, տվյալ կոլտնտեսությանը պետք է տալ այն զեղջը, վորոշում է չրջանային հարկային հանձնաժողովը, նայած այն բանին, թե վոր չափով է կատարված պլանը և ինչպես է դրված

հաշվառումն ու հաշվետվությունը կոլտնտեսությունում: Կոլտնտեսություններին տրվող այդ զեղջը ոգտագործվում է պարզեւտրման համար: Այն կոլտնտեսությունը, վորը զեղջ է ստացել հարկից, պետք է այդ դումարն ամբողջովին ծախսի լավագույն բրդեղեններին և առանձին հարվածային կոլտնտեսականներին պարզեւտրելու համար, վորոնք իրենց լավագույն աշխատանքով աչքի են ընկել այդ գործում:

ԱՐՏՈՆՈՒՅՈՒՆՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԵԱԿՈՒՅՐՆԵՐԻՆ

1933 թ. ժողովրդական տնտեսության պլանի գրած խնդիրներից մեկը տեխնիկական մշակույթների ընդարձակման և զարգացման հարցն է:

Այդ նպատակով կոլտնտեսություններին մեծ արտոնություններ են տրվում գյուղհարկի գծով:

Կոլտնտեսությունների շաքարի ճակնդեղի ցանքերը խստառ ազատվում են գյուղհարկից:

Անկատկած տվյալ արտոնությունը կ'նպաստի այն բանին, վոր կոլտնտեսությունների շաքարի ճակնդեղի ցանքերն անցյալ տարվա համեմատությամբ չատ ավելի կ'նդարձակվեն:

բ) Բամբակի և յերկարամազ կտավհատի ցանքերը հարկվում են արտոնյալ կարգով, այսինքն տվյալ շրջանի համար սահմանված հացահատիկային ցանքի հարկի դրույքի չափով:

Դա նշանակում է, վոր յեթե տվյալ շրջանի համար կոլտնտեսության մեկ հեկտար հացահատիկային ցանքի հարկը սահմանված 2 ու 50 կ., ապա յուրաքանչյուր հեկտար բամբակի ու յերկարամազ կտավհատի համար կոլտնտեսությունը նույնպես կվճարի միայն 2 ու 50 կ.:

Բացի այդ, ջրովի հողագործական շրջաններում դեմի (անջրդի) հողերի վրա կատարված բամբակի, յերկարամազ կտավհատի ցանքերը յերեքնուկի ու

խամ այն հոգերի վրա, վորոնք վարված են աչնա-
նից—գյուղհարկից ևս լրիվ ազատվում են:

դ) Կանեփի ցանքերը կոլտնտեսություններում
հարկվում են արտոնված կարգով, այսինքն տվյալ
չքանի համար սահմանված հացահատիկային ցանքի
դրույքի կեսի չափով:

Յեթե տվյալ չքանում մեկ հեկտար հացահատի-
կային մշակութային համար սահմանված և հարկ
3 ո., ապա յուրաքանչյուր հեկտար կանեփի համար
կոլտնտեսությունը կ'վճարի վոչ թե 3 ո., այլ մի-
միայն $1\frac{1}{2}$ ո.:

դ) Մեր արդյունաբերության հումույթի բա-
զան ուժեղացնելու համար պետք է զարգացնել նոր
մշակութային, այն է՝ կենսաֆի, հարավային կա-
նեփի, կանատնիկի, քենդերի և ուսմիի ցանքերը:
Այդ պատճառով թված մշակութային ևս ազատվում
են գյուղհարկից: Բացի այդ, սերմբուծարանների հա-
մար հատկացված բոլոր ապրածությունները, ինչպես
և յեթերայուղարույսերի և դեղաբույսերի ցանքերը,
լիովին ազատվում են գյուղհարկից:

Արտոնություններ կենդանաբծության յեվ կաթնասնե-
սության զարգացման համար

Գյուղատնտեսության զարգացման 1933 թ. սլա-
նում կենտրոնական տեղն է բռնում կենդանաբուծու-
թյան խնդիրը:

Կոլտնտեսական կենդանաբուծությունը զարգաց-
նելու նպատակով, բոլոր տեսակի անասուններն (կո-
վեշ, յեզներ, վոչխարներ, խոզեր և այլն) կոլտնտեսու-
թյուններում ազատվում են գյուղհարկից:

Այդ արտոնությունը տարածվում է նաև թռչնա-
բուծության և մեղվաբուծության վրա:

Բացի դրանից այն կոլտնտեսություններում, վոր-
տեղ գոյություն ունեն, ապրանքային ֆերմաներ,
հարկումից ազատվում են վոչ միայն անասունները և

թռչնաբուծությունը, այլ և այն ամբողջ կերի տա-
րածությունը և այն կերը, վոր կոլտնտեսությունը ֆեր-
մային և հանձնում:

Ձի հարկվում կոլտնտեսություններում նաև ապրա-
նալքին ֆերմաների վոչգյուղատնտեսական ձեռնար-
կությունների յեկամուտը:

Արտոնություններ կոլտնտեսական առևտրի հետագա
զարգացման համար

Կարևոր խնդիրներից մեկը կոլտնտեսական առև-
տրի զարգացումն է: Կուսակցության և կառավարու-
թյան վերջին բոլոր ձեռնարկումները նպատակ ունեն
ամրապնդելու կոլտնտեսությունները, բարձրացնելու
բերքատվությունը և զարգացնելու կոլտնտեսական ա-
ռևտուրը: Ստեղծվում են պայմաններ այդ առևտրի ծա-
վալման համար, միաժամանակ վճռական միջոցներ և
ձեռք առնվում մասնավոր առևտրականների և միջնորդ
սպեկուլյանտների դեմ:

Կոլտնտեսական կրպակների, կոլտնտեսական շու-
կայի միջոցով կոլտնտեսությունների արտադրանք վա-
ճառելը պետք է լինի այն միջոցներից մեկը, վոր կնը-
պաստի խորհրդային առևտրին:

Այդ պատճառով գյուղատնտեսական արտադրանքը
չուկայում վաճառելուց ստացած յեկամուտները միան-
գամայն ազատվում են հարկումից:

Արտոնություններ կարմիր բանակայիններին

Հատուկ ուշադրության են արժանի այն արտոնու-
թյունները, վորոնք տրվում են կարմիր բանակային-
ների ընտանիքներին:

Յեթե կոլտնտեսության մեջ կարմիր բանակայիններ
կան, ապա նրանցից յուրաքանչյուրի համար կոլտնտե-
սությունն արտոնություն է ստանում: Արտոնությունը
կայանում է նրանում, վոր կոլտնտեսության հարկի այն

մասը, վորը կարմիր բանակայիններին և ընկնում, գուրս և հանվում հարկի ընդհանուր գումարից:

Որինակ՝ կոլտնտեսության ընդհանուր հարկը հաշվարկված և 2000 ռուբլի, տվյալ կոլտնտեսությունը հարյուր անդամ ունի, հետևապես նրանցից յուրաքանչյուրին ընկնում և 20 ռ. հարկ: Կոլտնտեսության անդամներից 10 կարմիր բանակումն են ծառայում:

Արտոնության կարգով տրվող զեղչը կազմում և 200 ռուբլի:

Այդ արտոնությունը տրվում և ա) կադրային, շաքային և կրտսեր պետկազմի զինվորականներին, վորոնք գտնվում են ժամկետավոր—(անընդհատ) կամ գերակետիկ ծառայության մեջ, հաշվելով նաև 1933 թ. աշնան զորակոչվածներին:

բ) կադրային և պահեստի (ռեզերվ) պետկազմի միջին, ավագ և բարձր զինվորականներին:

գ) նախագորակոչային կամ արտագորային պարապմունքները ղեկավարելու համար, վորպես հրահանգիչներ, կամ իրենց համար սահմանված հավաքների կանչված յերկրային զորամասերի փոփոխական կազմում, յերկարատև արձակուրդում և պահեստում գտնվող հրամանատարական միջին, ավագ և բարձր պետկազմին պատկանող անձանց:

դ) կրտսեր պետկազմի զինվորականներին, վորոնք յերկարատև արձակուրդից փոխադրված են յերկրային մասերի փոփոխական կազմի մեջ:

Որենքով սահմանված արտոնությունները տարածվում և նաև «ա» և «բ» կետերում թված այն զինվորականների վրա, վորոնք ստացել են յերկարատև արձակուրդ, փոխադրվել են պահեստի մեջ կամ բոլորովին արձակվել են ծառայությունից 1933 թ. հունվարից հետո:

Նույնպիսի արտոնություններ կոլտնտեսությունը ստանում և և իր հետևյալ անդամների համար՝

1. ԽՍՀՄ շքանշաններով, կամ հեղափոխական

պատվավոր զենքով պարգևատրվածների և աշխատանքի հերոսների:

2. Նախկին կարմիր գվարդիականների և կարմիր պարտիզանների:

3. Միլիցիայի օպերատիվ-չարային և վարչատնտեսական կազմում ծառայողների:

4. Ռազմականացված պահակության մեջ ծառայողների:

4. Առաջին, յերկրորդ և յերրորդ կարգի պատերազմի և աշխատանքի հաշմանդամների:

6. Գյուղական այն ակտիվիստների ընտանիքներին, վորոնք տուժել են կուլակային վրեժառությունից գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային գույքի պահպանության համար մղվող պայքարում:

7. Անտառային այն աշխատողների ընտանիքներին, վորոնք սպանվել են պետական գույքը պահպանելու ասպարեզում իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ կամ այդ կապակցութամբ:

8. Մանկատների այն սաներին և լիակատար այն վորբերին, վորոնք ընդունվել են կոլտնտեսության մեջ:

Վորպեսզի լրիվ չափով կենսագործվեն կարմիր բանակայինների ընտանիքների համար սահմանված արտոնությունները, գյուղխորհուրդները նախորդ կազմում են կարմիր բանակայինների ցուցակները, մտցնելով անպայման այդ ցուցակներում 1933 թ. աշնան զորակոչիչների ընտանիքներին:

Միաժամանակ կազմում են նաև այն տնտեսությունների ցուցակները, վորոնք ողտվում են կարմիր բանակայինների արտոնություններով:

Արտոնություններ գաղթող կոլտնտեսություններին

Գաղթն ու նոր վայրում տեղավորվելը միշտ էլ կապված և զգալի ցավների և ծախսերի հետ: Իշխանությունն ամեն կերպ ոգնում և գաղթող կոլտնտեսություններին վարկով, անհրաժեշտ նյութեր մատա-

կարարում և այլն: Բացի այդ, գաղթող կոլտնտեսու-
թյունները գյուղհարկից ազատվում են: Այդ արտոնու-
թյունները տրվում են տարբեր ժամկետներով, նայած
թե կոլտնտեսությունը վոր շրջանն է գաղթում և ինչ
հողի վրա յե տեղավորվում:

Մշակված հողի վրա գաղթող կոլտնտեսությունը
հարկ չի վճարում 3-տարվա, իսկ խամ հողերի՝ 4 տար-
վա ընթացքում: Յեթե այդ հատկացված հողամասը
պետք է նախապատրաստվի, կոճղահատվի, չորացվի և
այլն, կոլտնտեսությունը չի հարկվում 6 տարվա ըն-
թացքում:

Տարերային աղետի հետևանքով տրվող արտոնու- թյունները

Տարերային աղետներից տուժված ամեն մի կոլ-
տնտեսություն կարող է միջնորդություն հարուցել
հարկից լրիվ ազատվելու կամ մասնակի զեղչ ստանա-
լու համար:

Աղետի հետևանքով հարկից զեղչեր կատարե-
լու իրավունքը վերապահված է շրջանային հարկային
հանձնաժողովին, վորը կոլտնտեսության կրած վը-
նասի, չափը պարզելով, վորոշում է հարկի զեղչի չա-
փը:

Կոլտնտեսության հարկելու կարգը

Որինակ՝ կոլտնտեսությունը պլանով ցանել է 300
հեկտար, այդ ցանքը ըստ առանձին մշակույթների
բաշխվում է հետևյալ կերպ և յենթադրենք, վոր որեն-
քով սահմանված է յուրաքանչյուր հեկտար մշակույթի
համար հետևյալ հարկի դրույթները ռուբլիներով՝

Հացահատիկային 200 հեկտ. 2 ռ. 50 կ.

Կարտոֆիլ 30 հեկտ. 3 ռ.

Բանջարանոցներ 20 հեկտ. 14 ռ.

Խաղողի այգիներ 50 հեկտ. 20 ռ.

Բացի այդ, կոլտնտեսությունը ունի 50 հեկտ. բամ-

բակ, 10 հեկտ. շաքարի ձաղնդեղ և 4 հեկտ. կանեփի
ցանք:

Այժմ հեշտությամբ կարելի յե հաշվարկել գյուղա-
տնտեսությունից ստացած հարկը: Բաղմապատկելով
յուրաքանչյուր մշակույթի հեկտարի դրույթը
նույն մշակույթի տարածության վրա, կստաց-
վի կոլտնտեսության գյուղատնտեսությունից ստացած
հարկի գումարը, այն է՝ հացահատիկային 500 ռ.
(2,5×200), կարտոֆիլի 90 ռ. (3×30), բանջարանոցների
280 ռ. (14×20) այգիների 1000 ռ. (20×50): Բացի այդ
բամբակի հարկի գումարը կստացվի 125 ռ. (հարկվում
է հացահատիկային ցանքի համար սահմանված դրույ-
թով), կանեփի ցանքի հարկի գումարը 5 ռ. (հարկվում
է հացահատիկային դրույթի կեսի չափով), իսկ շաքա-
րի ձաղնդեղը ազատվում է հարկից: Այդպիսով տվյալ
կոլտնտեսության գյուղատնտեսությունից ստացած
հարկի գումարը—2000 ռ.: Այդ գումարից պետք է
գուրս գալ կոլտնտեսության կարմիր բանակայինների
իրավունքներով ոգտվողների յուրաքանչյուրի վրա
ընկնող հարկի մասը և գուրս գալ բերքատվության
պլանի բարձրացման և հաշվառումն ու հաշվետվու-
թյունը կազմակերպելու համար զեղչի գումարը, յեթե
այդպիսին շրջանային հարկահանձնաժողովի կողմից վո-
րոշված է տարածել տվյալ կոլտնտեսության վրա:

Գյուղատնտեսությունից ստացած հարկի հաշվարկը
պետք է կատարել այն հաշվով, վորպեսզի ծանուցադը-
րերը հանձնվեն կոլտնտեսություններին վոչ ուշ, ոգոս-
տոսի 1-ից, իսկ հարկը կոլտնտեսությունները վճարում
են 2 ժամկետում, այն է՝ 50 տոկոսը հոկտեմբերի 1-ին,
մնացած 50 տոկոսը նոյեմբերի 1-ին 1933 թ.:

Վորովհետև կոլտնտեսություններից զանձվելիք
հարկը հաշվվում է վոչ միայն գյուղատնտեսությունից
այլև վոչ գյուղատնտեսական ձեռնարկներից (բացի աշ-
խատավարձից), ուստի այդ վոչ-գյուղատնտեսական
ձեռնարկներին յեկամուտի հարկման համար ևս սահման-
ված են հարկի դրույթներ՝ գյուղատնտեսական կոմու-

նաները և արտերները վճարում են յուրաքանչյուր մեկ ուրբա 3,5 կ., միասեղ հող մշակող ընկերութիւնները 5 կոպեկ: Սակայն պետք է նշել, վոր վոչ գյուղատնտեսական ձեռնարկութիւնների յեկամուտը յենթադրաբար չէ հարկման վոչ թե սմբողջութեամբ, այլ բոլոր արտադրական ծախսերը դուրս գալուց հետո: Վոչ գյուղատնտեսական վաստակներից ստացած հարկը կոլտնտեսութիւնները վճարում են մինչև 1934 թ. մարտի 15-ը:

ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԿՈՆՏԵՆՏԱԿԱՆՆԵՐԻՆ

Նախ և առաջ պետք է նկատի ունենալ, վոր գյուղահարկ վճարում են այն կոլտնտեսականները միայն, վորոնց տնտեսութեան մի մասը հանրայնացված է: Այդպիսով այն կոլտնտեսականը, լինի նա կոմունայի կամ արտելի անդամ, վորն իր սմբողջ տնտեսութիւնը կոլտնտեսութեան է հանձնել, գյուղահարկ չի վճարում:

Կոլտնտեսականները հարկվում են մոտավորապես նույն կարգով ինչ, վոր մենատնտես միջակները, սակայն կոլտնտեսականների արտոնութիւնները ավելի մեծ են:

Գյուղահարկի յենթակա են կոլտնտեսականների գյուղատնտեսութիւնից և վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից (բացի աշխատավարձից) ունեցած յեկամուտները: Գյուղատնտեսութեան մեջ հարկվում են չհանրայնացված ցանքի, խոտհարքների, գյուղատնտեսական հատուկ ձյուղերի յեկամուտները:

Կոլտնտեսականների բոլոր տեսակի չհանրայնացված յեկամուտներից, այսինքն դաշտամշակութիւնից, մարդագործութիւնից, գյուղատնտեսական հատուկ ձյուղերից և վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտներից հարկը գանձվում է կայուն դրույքների համաձայն, տարբեր դումարով զանազան չրջաններում:

Կարևոր է հիշել, վոր հարկվում է վոչ գյուղատնտեսական այն վաստակը, վոր կոլտնտեսականն ունեցել են նախորդ տարում, այսինքն 1932 թ. ընթացքում ստացած յեկամուտը:

Այն յեկամուտը, վոր կոլտնտեսականն ունեցել է վարձու աշխատանքից (աշխատավարձը) լրիվ ազատվում է հարկումից:

Բացի այդ, անաշխատունակ անդամներ ունեցող կոլտնտեսականները զեղչ են ստանում հարկի դրույքից, ըստ վորում 2 անաշխատունակ անդամ ունեցող տնտեսութիւնների հարկից զեղչվում է 5 տոկոս, 3 անաշխատունակ անդամ ունեցողների՝ 10-ի չափով, 4 և ավելի անաշխատունակ անդամ ունեցողների՝ 15 տոկոս:

ԱՐՏՈՆՈՒՔ-ՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՄՍՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԺԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՔՆԵՐԻՆ.

Կարմիր բանակայինները, նախկին կարմիր գվարդիականները ու կարմիր պարտիզանները, հաշմանդամութեան առաջին յերեք խմբերին պատկանող հաշմանդամները, ռազմականացված պահակութեան, միլիցիայի մարմիններում աշխատողները, վորոնց մենք վերեթիւցինք, արտոնութիւն են ստանում կոլտնտեսութեան մեջ, դրանից դուրս արտոնութիւն են վայելում նաև իրենց վոչ-հանրայնացված յեկամուտի հարկման ժամանակ: Նրանց անհատական տնտեսութիւնները լրիվ չափով ազատվում են գյուղահարկից:

Այն տնտեսութիւններում, վորոնց կազմի մեջ կան զինվորականներ կամ պահեստի զինապարտներ, վորոնք կանչված են նրանց համար սահմանված ուսուցման և հավաքների—հարկի այն մասը, վորի վճարման ժամկետը լրանում է ուսուցման և հավաքի ժամանակամիջոցում, հետաձգվում է այդ անձանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով:

Այստեղ լայ պետք է հիշել, վոր ժամկետային (ան-

ընդհատ) կամ մինչ-ժամկետային ծառայութեան մեջ մտնող կադրային, շարային և ստորին պետկազմի զին-վորականները, ինչպէս և պահեստում (ռեզերվ) գտնվող կադրային միջին, ավագ և բարձր պետկազմի զինվորա-կանները արտոնութիւն ստանալու իրավունք ունեն նաև այն դեպքում, յերբ նրանք յերկարատե արձակուրդ են ստացել, պահեստի մեջ են փոխադրվել, կամ բոլորովին ազատված են ծառայութիւնից 1933 թ. հունվա-րի մեկից հետո:

Առանձին կոլտնտեսականները հարկից ազատվում են

Առանձին կոլտնտեսականներին հարկից ազատելու իրավունքը պատկանում է գյուղական և շրջանային հարկահանձնաժողովներին: Վարպեսգի արտոնութիւնից ոգտվեն կոլտնտեսականներից այնպիսիները, ովքեր ի-րոք կարիք ունեն, գյուղի հարկային հանձնաժողովնե-րը կազմում են առանձին կոլտնտեսականների ցուցակը, քննում են կոլտնտեսականների ժողովում և ստուգում են կատարում պարզելու համար, թե ինչ չափով հար-կից պետք է ազատվի տվյալ տնտեսութիւնը:

Ստուգումից և քննութիւնից հետո միայն ցուցակը հանձնվում է շրջհարկահանձնաժողովին, վորը և վորո-շում է թե կոլտնտեսականներից ովքեր պետք է հարկից իսպառ ազատվեն և ովքեր մասնակի չափով:

Այդ ձևով կազմված ցուցակները ներկայացվում են շրջանային հարկային հանձնաժողովին ի հաստատու-թիւն:

Գաղթողների ու տարերային աղետներից տուժողների համար սահմանված արտոնութիւններ.

Կոլտնտեսականներն իրենց վոչ-հանրայնացված յե-կամտի հարկից ազատվում են նույն ժամկետներով, վորոնք սահմանված են կոլտնտեսութիւն համար, այ-սինքն 3, 4, 6 տարվա ընթացքում: Տնտեսութիւն հարկ չվճարելը կախված է այն բանից, թե ինչպիսի հողերի

վրա յե նա տեղափոխվել (մշակված, խամ, կոճղահատ ման կարոտ), իսկ Միութեան Ծայրամասերը տեղա-փոխվելու դեպքում, այդ ժամկետն յերկարացվում է մինչև 15 տարի:

Կոլտնտեսականների տնտեսութիւնը տարերային աղետից տուժելու դեպքում ոգտվում է արտոնու-թիւմբ: Հարկային հանձնաժողովը վորոշում է կը-րած վնասը և ազատում է տնտեսութիւնը հարկումից լրիվ, կամ ել արտոնութիւն տալիս, ազատելով հար-կից մասնակի չափով:

Կուլակների վրիժառութիւնից տուժած տնտեսու-թիւնները հարկից ազատվում են.

Պայքարելով խորհրդային իշխանութեան և կոլտն-տեսութիւնների դեմ, կուլակը վոչ մի ջանք չի խնա-յում կոլտնտեսականներին վնասելու համար: Կուլակը կանգ չի առնում կոլտնտեսականների, գյուղի ակտի-վիստների սպանութեան առաջ, հրդեհում է նրանց գույքը և այլն: Պարզ է, վոր այն կոլտնտեսականները, վորոնք տուժել են կուլակութեան բռնութիւնից, պետք է ամեն տեսակի ոգնութիւն ստանան: Գյուղհարկում նրանց արտոնութիւնը արտահայտվում է նրանով, վոր հարկից ազատվում են գյուղական այն ակտիվիստների ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրիժա-ռութիւնից՝ գյուղի սոցիալիստական վերակառուց-ման և հանրային սեփականութեան պաշտպանութեան համար մղվող պայքարում:

Նմանապէս հարկից լրիվին ազատվում են այն ան-տառային աշխատողների ընտանիքները, վորոնք սպան-վել են պետական գույքը պաշտպանելու ժամանակ ի-րենց պաշտոնական պարտականութիւնները կատարե-լիս, կամ այդ կապակցութեամբ:

Արտոնություններ տեխնիֆական մշակույթների գար-
գացման համար

Կոլտնտեսականների տնտեսության վոչ-հանրայ-
նացված մասը հարկելու ժամանակ նրանց տրվում է այն
բոլոր արտոնությունները, վորոնք սահմանված են մե-
նատնտեսների համար, տեխնիքական մշակույթները
դարգացնելու նպատակով:

Կոլտնտեսականների անասունները չեն հարկվում

Ազատելով հարկումից կոլտնտեսությունների անա-
սունները, բացառիկ նպատակով որ պայմաններ ստեղծե-
լով կերի բազան ընդարձակելու համար, գյուղհարկի
նոր որենքով հարկումից լրիվ ազատվում է նույնպես
կոլտնտեսականի անհատական տնտեսության անասուն-
ները, թռչունները, մեղուները և ճագարները:

Արտոնություններ կոլտնտեսական առևտրին

Խոշոր տեղ է բռնում կոլտնտեսականների առևտրի
հարցը: Կուսակցության և կառավարության ունեցած
վերջին վորոշումները տանում են դեպի գյուղատնտե-
սական հետադա վերելքը:

Այս բլորի մասին պետք է տեղյակ լինի կոլտնտե-
սականը և աշխատավոր մենատնտեսը: Դա հիմքում ար-
մատախիլ կանի կուլակների այն ագիտացիան, վորը
ուղղված է կուսակցության ու կառավարության ձեռ-
նարկումների դեմ:

Կոլտնտեսական առևտուրը ծավալելու, սպեկուլ-
յացիային վերջ դնելու, և խորհրդային շուկան դարգաց-
նելու համար, գյուղհարկի որենքը հարկից ազատում է
գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացած
կոլտնտեսականների յեկամուտները:

Այլ արտոնություններ

Բացի թված արտոնություններից, որենքով ազատ-
վում են այն վոչ-գյուղատնտեսական վաստակները, վո-
րը կոլտնտեսականը ստանում է անտառամթերումից
գետով անտառ փոխադրելուց և տորֆի մթերումից:

Բացի այդ հետախուզ կոլտնտեսականների (ста-
тели) վաստակները ևս ազատվում են հարկից: Այն
հետախուզները, վորոնք բանում են հետախուզական
աշխատանքներում իրենց սեփական ձիերով, ազատվում
են հարկից:

Դրա հետ միասին գյուղհարկից ազատվում են այն
յեկամուտները, վորոնք ստացվում են ա) յեղեմնու-
ղնկույզներ հավաքելուց, բ) ուտիլ սիրյո և մետաղի
լում հավաքելուց և գ) խիթ հավաքելուց: Այս արտոնու-
թյունը տրվում է այն դեպքում, յերբ հավաքված նյու-
թը ամբողջությամբ հանձնվում է պետական և կոոպե-
րատիվ կազմակերպություններին:

Գյուղհարկից ազատվում են յերկաթուղային, ջրա-
յին, խճուղային և գրունտային տրանսպորտի դժային
աշխատողների գյուղատնտեսական բոլոր տեսակի յե-
կամուտները, վորոնք ստացվում են տրանսպորտին
հատկացված հողամասերում գտնվող տնտեսություն-
ներից:

Վերջապես գյուղհարկից ազատվում են այն կու-
տնտեսականների տնտեսությունները, վորոնք մի տա-
րուց վոչ պակաս ժամանակով կոնտրակտացիա յեն
կնքում կամ ինքնամրացվում են ամխարդյունաբերու-
թյան մեջ ստորերկրյա աշխատանք կատարելու հա-
մար:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սակավագոր մենատնտեսները ազատվում են հար-
կից լրիվ կամ մասնակի չափով գյուղհարկային հանձ-
նաժողովների վորոշմամբ:



Գյուղհարկի հաշվառման հետ միաժամանակ գյուղ-հարկային հանձնաժողովները պարտավոր են կազմել չքավոր տնտեսությունների ցուցակները, հատուկ ու-չադրություն դարձնելով, վոր առաջին հերթին գյուղ-հարկից ազատվեն կարմիր բանակայինների, նախկին կարմիր զվարդիականների և կարմիր ռաբտիզանների տնտեսությունները:

Այդ ցուցակները գյուղի ակտիվի ընդհանուր ժո-ղովներում քննելուց հետո, ներկայացվում են շրջան-նաժողովին հաստատելու համար:

Այն չքավոր տնտեսությունները, վորոնք չեն մտնի ցուցակի մեջ, կարող են ինքնուրույն դիմում տալ գյուղ-հանձնաժողովներին գյուղհարկից ազատելու համար:

Մի շարք այնպիսի արտոնություններ, վորոնք տր-վում են այս տարվա որենքով կոլտնտեսականներին, տարածվում են նաև աշխատավորական մենատնտե-սների վրա:

Այսպես որինակ՝

1. Տեխնիքական մշակույթների հետագա զարգացման նպատակով՝ շաքարի ճակնդեղի ցանքերը գյուղհարկից միանգամայն ազատվում են: Այդ նույն նպատակով բամ-բակի, կանեփի ու կտավհատի ցանքերը հարկվում են վոչ թե իրենց բարձր իրական յեկամտաբերության հա-մեմատ, այլ հացահատիկային ցանքի նորմաներով, այ-սինքն ավելի ցածր չափով: Բացի այդ, խոշոր արտոնու-թյուններից, ջրովի հողագործական շրջաններում դեմի հողերի վրա կատարված բամբակի ցանքը, ինչպես և յերկարամազ կտավհատի ցանքերը յերեքնուկի ու խամ այն հողերի վրա, վորոնք վարված են աշնանից, ազատ-վում են հարկումից: Մնացած այլ տեխնիքական մշա-կույթները՝ կենաֆի, հարավային կանեփի, կանատնի-կի, քենդիրի ու ռամիի ցանքերը ևս ազատ են հարկու-մից:

Անասնապահությունը, զարգացնելու նպատակով հարկից ազատվում են 1932 թ. համեմատությամբ այս տարի ավելացած բոլոր արդյունավետ անասունները

(կովերը, մատակները, ցուլերը, վոչխարները), այս-պես՝ յեթե մի տնտեսություն ունեցել է 1932 թ. 1 կով, և 10 վոչխար, այս տարի նա ունի 2 կով և 15 վոչխար, նրա մեկ կովը և 5 վոչխարը բոլորովին հարկի չեն յե-թարկվում: Հարկից ազատվում են կարակուլի և կիսա-կարակուլի վոչխարները: Բացի այդ բոլորից գյուղհար-կից ազատվում են այն յեկամատները, վորոնք ստաց-վում են թռչնարմուծությունից, խոզարուծությունից, ճագարարուծությունից և շերամապահությունից:

Առանձին ուշադրության են արժանի որենքով գին-վորականներին տրվող արտոնությունները:

Կարմիր բանակայինները, նախկին կարմիր զվար-դիականներն ու կարմիր պարտիզանները, հաշմանդա-մության առաջին յերեք խմբերին պատականող աշխա-տանքի և պատերազմի հաշմանդամները, ռազմականաց-ված պահակության, միլիցիայի մարմիններում աշխա-տողները, վորոնք ազատվում են կոլտնտեսություննե-րում և կոլտնտեսականների տնտեսություններում, մեծ արտոնություն են ստանում և մենատնտեսների հարկ-ման ժամանակ:

Յեթե աշխատավոր մենատնտեսի ընտանիքը ունի նման անդամներ և յեթե տնտեսության հաշված հարկը 20 ո. ավելի չե, այդ հարկը ամբողջովին զիջվում է: Իսկ յեթե հարկը 20 ո. ավելի յե, ապա այդ գումարից գեղջ է տրվում հարկի տարբեր գումարներից, տարբեր չափով հեռեւյալ կերպ՝

Մեկ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԱՇՎԱԾ ՀԱՐԿԻ ՉԱՓԸ	Ձեղջ է տրվում հարկից %/0-ով	
	Յեթե տնտեսու-թյան մեջ ուրիշ ազ-խատող աղամարդ-կա	Յեթե տնտեսու-թյան մեջ ուրիշ աղա-աշխատող աղա-մարդ չկա
Մինչև 20 ո.	100	100
20 ավելի մինչև . . . 30 ո.,	40	60
30 » » . . . 50 »	25	35
50 » » . . . 75 »	15	25
75 » » . . . 100 »	5	10
100 » » . . . —	5	5

Յեթե տնտեսության մեջ կան մի քանի զինվորականներ, կամ հաշմանդամներ, կամ այլ անձինք, վորոնք թված են վերևում, ապա մատնանշված արտոնությունները տրվում են տնտեսության ամեն մի այդպիսի անձի համար:

Որինակ՝ տնտեսության մեջ կան 2 կարմիր բանակային: Տնտեսությունից հարկ է հասնում 50 ռ.: Այդ ժամանակ, նույնիսկ ուրիշ աշխատող տղամարդի առկայության դեպքում տրվում է զեղչ 25-ական տոկոս ամեն մի կարմիր բանակայինի համար, այսինքն ընդամենը հարկի 50 տոկոսը, կամ 25 ռ. զեղչում է:

Միաժամանակ լավ պետք է իմանալ և այն, վոր յեթե մենատնտես կարմիր բանակայինի ընտանիքը յենթարկված է գյուղհարկի կայուն դրույքով, ապա նա այդ հարկից լրիվ ազատվում է:

Որինակ՝ Ստեփանավանի չըջանի Վարանցովկա գյուղի ք. Ակիմովի տնտեսության մեջ կա կարմիր բանակային: Տնտեսությունից կայուն դրույքով հարկ է պահանջվում 30 ռ., այսինքն տվյալ վայրի կոլտնտեսականների համար սահմանված կայուն դրույքի չափով:

Այդ դեպքում, անկախ նրանից, կա տնտեսության մեջ ուրիշ աշխատող տղամարդ թե վոչ, կարմիր բանակայինի ընտանիքը լրիվ ազատվում է հարկից:

Այն տնտեսություններում, վորոնց կազմի մեջ կան զինվորականներ, վորոնք կանչված են նրանց համար սահմանված ուսուցման և հավաքների, հարկի այն մասը, վորի վճարման ժամկետը լրանում է ուսուցման և հավաքի ժամանակամիջոցում, հետաձգվում է այդ անձանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով:

Յեթե տնտեսության կազմի մեջ մտնում են յերկրային մասերի փոփոխական կազմի զինվորականներ, վորոնք կանչված են յերեք ամսվա ուսուցման, իրենց ծառայության առաջին տարում, կամ կանչված են զինվորական հավաքների իրենց սեփական չարային ձիերով, ապա այդ ձիերը ազատվում են հարկից:

Այլ արտոնություններ

Մի շարք այնպիսի արտոնություններ, վորոնք սահմանված են գյուղհարկի նոր որենքով կոլտնտեսականների համար, տարածվում են նաև աշխատավոր մենատնտեսների վրա, այն է՝

ա) հարկից բոլորովին ազատվում են այն բանվորները և ծառայողները, վորոնք գյուղատնտեսությամբ են պարապում տնամերձ հողերում և ունեն մեկից վոչ ավելի կով, մանր անասուն և խոտհարքներ, բայց չունեն դաշտային հող և բանող անասուններ, յեթե նրանց աշխատավարձը հանդիսանում է յեկամտի հիմնական աղբյուրը:

բ) ազատվում են հարկից այն անձանց տնտեսությունները, վորոնք մի տարուց վոչ պակաս ժամանակով կոնարակտացիայի յեն յենթարկվել ամիսատրոյունարերության մեջ ստորերկրյա աշխատանք կատարելու համար:

գ) տարերային աղետներից տուժված տնտեսությունները լրիվ կամ մասնակի չափով ազատվում են գյուղական հարկային հանձնաժողովների վորոշմամբ, յենելով աղետից կրած վասի չափից և տնտեսության ունակությունից:

դ) կուլակային վրիժառությունից տուժած գյուղական ախտիվիստների տնտեսությունները և անտառային այն աշխատակիցների ընտանիքները, վորոնք սպանվել են իրենց պարտականությունները կատարելու ժամանակ, ողտվում են այն արտոնություններով, վորոնք սահմանված են կոլտնտեսականների համար:

Հատուկ արտոնություն է սահմանված նաև այն անձանց տնտեսությունների վերաբերյալ, վորոնք ստանձնել են վորբերի և նրանց դույքի խնամակալությունը: Խնամակալության հաստատումից յերեք տարի ժամանակով ազատվում են հարկից այն յեկամուտները, վորոնք ստացվում են խնամակալության տակ դառնվողների բաժինը կազմող հողամասերից և նրանց պատկանող

անասուններից: Այս արտոնությունները գործադրվում են միմիայն այն դեպքում, յեթե խնամակալներն ապրում են վորբերի հետ միասին և նրանց տնտեսությունը վարվում է միատեղ:

Մի քանի խոսք վոչ գյուղատնտեսական վաստակներից ստացած յեկամուտների հարկման մասին:

Նախ և առաջ պետք է լավ հիշել, վոր հարկվում է վոչ-գյուղատնտեսական այն վաստակը, վորը մենատնտեսը ունեցել է նախորդ տարում, այսինքն 1932 թ. ընթացքում:

Վոչ-գյուղատնտեսական յեկամուտներից գուրս է հանվում ձեռնարկության կամ արհեստի արտադրական ծախսերը (վառելիքի, հումքի, մեքենայի փերանորոգման, ձիու կերի և այլն ծախսերը): Հարկվում է մնացած գումարն վոչ թե ամբողջությամբ, այլ նրա մի մասը, այն է՝ 30 տոկոսը:

Այստեղ լավ պետք է հիշել և այն, վորը գյուղհարկի հաշվառման ժամանակ վարձու աշխատանքից ստացած յեկամուտները հաշվի չեն առնվում և համապատասխան դեպքում յենթարկվում են յեկամուտային հարկի: Միաժամանակ լավ պետք է իմանալ, վոր կոոպերացված տնայնագործների արտադրանքը արտելին հանձնելուց ստացած յեկամուտները գյուղհարկի չեն յենթարկվում, իսկ տնայնագործական և արհեստագործական այն յեկամուտները, վորոնք ստացվում են արտադրանքը արտելից գուրս վաճառելուց, մացվում են տնտեսության յեկամուտի մեջ վերը նշված հիմունքներով:

Բացի այդ բոլորը, գյուղհարկի նոր որենքով սահմանված են ելի մի շարք արտոնություններ անհատական աշխատավորական մենատնտեսների համար, սակայն այդ բոլորը թվել զվար է և այդ պատճառով սահմանավախվում ենք գլխավոր արտոնություններով:

Դրա հետ միասին, շատ լավ պետք է իմանալ, նաև այն, վոր կուլակային տնտեսությունները գյուղհարկի

վոչ մի արտոնություններից ոգավելու իրավունք չունեն: Ընդհակառակը անցյալ տարվա որինակով նրանք հարկվում են իրենց իրական յեկամուտների համեմատ անհատական կարգով:

4. ԱՊՐԱՅԻՆ 1933 Թ. ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Թված արտոնությունները ցույց են տալիս, վոր 1933 թ. գյուղհարկը պետք է նպատի՝ կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդմանը, բերքատվության բարձրացմանը, տեխնիկական մշակույթների և կենդանաբուծության հետագա զարգացմանը, խորհրդային առևտրի ծավալմանը և կուլակության վերացմանը, վորպես դասակարգի:

Հատուկ արտոնություններ սահմանելով կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների համար, գյուղհարկի նոր որենքը պահանջում է վորպեսզի վոչ մի կուլակ չոգավի այդ արտոնություններից: Բացի այդ, նոր գյուղհարկի որենքով նախատեսված է, վոր տնտեսությունները, վորոնք բոնց կազմի մեջ մտնում են իրենց անցյալ գործունեյության հետևանքով ընտրական իրավունքներից զրկված անձինք (նախկին ժանդարմներ, վոստիկանական պաշտոնյաներ և այլն), յեթե նրանք չունեն անհատական կարգով հարկելու հատկանիշներ, չպետք է ոգավեն վորեւ արտոնությունից և ընդհանուր հիմունքներով նրանցից հաշվարկված հարկը պետք է կրկնապատկվի:

Գյուղհարկի հաջող կիրառումը կախված է այն բանից, թե վորքան կոթանդակեն գործին կոլտնտեսականները, մենատնտեսները և խորհրդային վոյջ հասա-

բակայնութիւնը, վորքան լայնորեն կծավալվեն սո-
ցիալիստական մրցումն ու հարվածայնութիւնը, վոր-
քան ճիշտ կիրադործվի կուսակցութեան և կառավարու-
թեան այն կարևորագույն վորոշումները, վորոնք ուղ-
ղված են դեպի գլխաւորապէս սոցիալիստական
վերակառուցման հաջող ավարտումը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0209304

ՊԵՏԶՐԱՏԻՏՊԱՐԱՆ

336
2-25

Դրավիտ 9220

Պատվեր 1431

Տիրաժ 2500